


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 Մճ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 Մճ.
Չամս. Կ. Պոլսոյ 3 Մճ.
Պատար երկիրներու 30 Պր.
Մանուկներու տուր մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 2 դրանոց թուղթ.



ԼԵՐԱՔԵՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց հանրու-
ծակքը խորագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի, զալա-
թիա Սանտրքըլար Հատակի թիւ
498, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծակքը չիմարուած նա-
մակ չընդունուիր :
Հատուած նամակ, յոգում, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ՓԵՏՐՈՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եղիպտոսի դէպքերուն վրայ Ազգ. քա-
նակագրային Եւրոպական լրագրաց
ուղղեալ հեռագիրք բաւական ման-
րաման անդեկութիւններ կուտան :
Նախարարաց սովորական խորհրդէ մը
յետոյ, Նուպար փաշան և Պ. Ռիվերս
Վիլլիս կառ. նստելով երեւոյց պաշ-
տօնէն մեկնելու ժամանակ, զինեալ
սպայներ, որոց թիւը չորս հարիւրի
չափ կը կարծուի, զանոնք արգելեցին,
իրենց գերդաստ թաղանթներուն վը-
ճարումը պահանջելով ետ դառնալու
հարկադրեցին թշնամանք, կառա-
պանը սուրի հարուածով վիրաւորե-
ցին, Նուպար փաշային զգուշացուց
ուրեցին և զինքն ալ դնտակով մը վիրա-
ւորեցին : Բմբաստ ամբողջ երեւոյց
պաշտօնատունէն ներս մտաւ մինչև
նախարարին սենեակը, բայց դուրս
եղնելու հրաւիրեցան, կամ ըստ ուրիշ
պատմութեան մը՝ խորհրդով դալէ ետե-
ղորաց միջոցաւ բռնի հանուեցան, և
դուրսը գումարուելով ապարանքը
պաշարեցին, որպէս զի նախարարնե-
րէն մարդ դուրս չընէ : Խորհիւ այս
գործին վրայ հիւպատոսներէն տեղե-
կութիւն առնելով հան դարու փութա-
ցեր էր հինգ հարիւրի չափ զորքով :
Անգղիոյ, Գաղթիոյ, Գերմանիոյ, Ա-
ւստրիոյ և իտալիոյ ընդհանուր հիւ-
պատոսներն ալ ներկայ էին : Ամբողջ
խորհրդով տեսնելուն պէս ծափահարելով
դուշեց : « Դուք ետ դարձէք, մեք նա-
խարարներէն ստակ պիտի առնուինք : »
Խորհրդով մեծ դժուարութեամբ յաջո-
ղեցաւ երեւոյց պաշտօնատունը մտ-
նել և քիչ մը վերջը դուռը մը զօրք
հասաւ : Այն ատեն խորհրդով պատուհա-
նէն ամբողջ ատենախօսելով խոստա-
ցաւ որ իրենց նկատմամբ արգարու-
թիւնը պիտի դադարէ : Երկու ժամ
վերջը խորհրդով մեկնելով կուգէր, բայց
այնպիսի դիմադրութիւն մը տեսաւ,
որ կրակ ընել հրամայեց իւր զօրաց :
Այն միջոցին արարողապետ Ապտուլ
Կատէր պէյ ձեռքէն վիրաւորեցաւ,
իսկ ամբողջ հինգ հարիւր վիրաւորե-
ցան և բազմաթիւ ձերբակալութիւնք
եղան : Ընդհանուր զգացում մը կոյ
թէ պաշտօնատարաց ետ մնացած ամ-
սականները պէտք է վճարուին : Ու-
րիշ հեռագիրք մը կըսէ թէ ամբողջ կաղ-
մաղ սպայից մեծագոյն մասը թուրք
և ջեղքէզ էին, և թէ խորհրդին շատ
մօտէն դնտակ մ'անցաւ, որ այս դէպ-
քին ժամանակ անձնական մեծ քա-
ջութիւն և պաղարկեցութիւն ցոյց
տուաւ : Եղիպտոսի զօրքն ասոր վը-
րայ օգը կրակ ըրին և ամբողջ վեր-
ջագէս ցրուեցաւ : Խորհրդով յետոյ նա-
խարարաց խորհուրդ գումարելով յայ-
տարարեց թէ քանի որ Նուպար փա-

շան պաշտօնի վրայ մնայ, ինք հա-
տարակայ անդորրութեան համար
պատասխանատու չկրնար լինել, ուս-
տի պէտք է որ կամ ինք կամ իւր
ընտրութեամբ կարգեալ նախարար մը
խորհրդոյն նախագահէ : Նուպար փա-
շան հրաժարական տուաւ որ ընդուն-
ուեցաւ : Անգղիոյ Պ. Ռիվերս Վիլլիս
ալ նոյնպէս հրաժարեցաւ :
Գործն այս վիճակին մէջ է, և
հեռագիրք մը կը ծանուցանէ թէ Անգ-
ղիա և Գաղթիա երկու պատերազմա-
կան նաւ զրկած են Ազգ. քանակագրի-
նէն : Անգղիոյ մէջ այս դէպքը լաւ տղա-
ւորութիւն չըրաւ, և կերակր որ ընդ-
գերմադէր մասին նոր դէպք պիտի տայ
Լորտ Պիքսֆիլտի աշխարհավարու-
թիւնը քննադատելու, որոյ փոքր Ա-
սիոյ հաշակաւոր բարենորոգմանց ժը-
րադիրն ևս արգէն ոգորմելի կերպիւ-
մ'ան յաջող եղաւ : Տէյլի Նիւզ լըրա-
գիրքը կը հարցնէ թէ արդեօք այս դէպ-
քը պետական հարուած մ'էր թէ
թաւերական : Խորհրդին քաջութիւ-
նը կրնայ իրական լինել, կամ վարժ-
գերատանի մը նման թաւերական :
Առաջինն անթաղութեամբ դէպքն
իրական համարել պէտք է, իսկ երկ-
րորդ եթաղութեամբ՝ բարձր տե-
ղէ եկած դրոշման մը հետեանք :
Ինչ որ է, Շէրիֆ փաշան Եղիպտա-
կան նախարարաց գլուխն անցեր և
խաղաղութիւնը վերականգնուեցաւ :
Տէյլի Նիւզ կըսէ թէ Անգղիոյ ոյս
պիտի շփոթ և նուստուկեցիչ զօր-
քին մը մէջ գտնուելուն պատճառը
Լորտ Պիքսֆիլտի միջամտոյ և խառ-
նակի աշխարհավարութեան արգիւն-
քնն է. ուստի խորհրդարանին մէջ
հարցումներ կը պատրաստուին՝ Պ.
Ռիվերս Վիլլիսի եղիպտական երու-
միայն նախարար կարգուելու պատ-
ճառներուն և Անգղիոյ կողմէն Ե-
ղիպտոսի գործոց փոխառութեանց
և պարտուց միջամտութեան վրայ :
Երեւոյց նախարարն արգէն առա-
ջին հարցման մը պատասխանելով լը-
րագրաց տուած տեղեկութիւնները
հաստատեց, յարելով թէ տակաւին
Պ. Ռիվերս Վիլլիսին հրաժարելուն վը-
րայ լուր չունէր :
Ինչպէս արգէն ըսինք, Լորտ Պի-
քսֆիլտի աշխարհավարութեան դէմ
բռնուն յարձակումներ կը պատրաս-
տուին, և Անգղիոյ լրագրաց խօսքին
նայելով, արգէն նախարարութիւնը
կ'զգայ իւր Արեւելեան աշխարհավա-
րութեան մէջ փոփոխութիւններ մը ա-
յնելու պէտքն, որոյ նշան կը հա-
մարուի Լորտ Տիւֆթերինի Բեդ-բադու-
րի դեպքան անուանին, որ Ռուսիոյ
հետ համաձայնութեան նպատաւոր
է եղեր, և Ուր Լէյարտի մայրաքաղա-
քէս մեկնելն, ուր ոչ ևս պիտի դառ-
նայ եղեր : Ուր Լէյարտ թուրքի ջերմ
բարեկամ էր, և թուրքիոյ հպատակ
քրիստոնեայ աղաւթ թիւնները կ'ար-

համարէր. անոր տեղ այժմ ուրիշ
դեպքան մը պիտի դրուի եղեր որ
նուազ կողմնակցութեամբ վարուի :
Գուցէ Անգղիա իւր աշխարհավարու-
թիւնն հիմնապէս չփոխէ, բայց հա-
ւանական է որ աւելի խոհեմ ընթացք
մը բռնէ, անսնելով մանաւանդ որ
իւր ծրագրերը մինչև հիմայ մեծ ար-
դիւնք չտուին : Բայց ձալի է որ իւր
շահուց համար ուրիշները չփոխուէ :
Սթամբուլ լրագիրն իւր երէկուան
թուով Հայաստանի բարենորոգմանց
և 'ի մասնաւորի Ռւսիոյ խնդրոյն վրայ
քանիմը լուրջ և խիստ իրաւայի խոր-
հրդածութիւններ կընէ, զոր ամեն
աղգասէր Հայոց գոհութեանն ու շը-
նորհալիւեաց արժանի կը համարուի :
« Այս վայրկեանիս յօժարակամ կը
ճանչնեմ, կըսէ, որ բազմաթիւ բա-
րենորոգմանց գործադրութիւնն ել-
մտական խնդրոյն կարգադրութեան
կախում ունի : Բայց այս ալ պատճառ-
մ'է որ Բ. Դրան և իւր պահանջա-
տեարց կամ նոր փոխառուաց միջև
լինելիք դրամական կարգադրութիւն-
ներէ կախում չունեցող բարեբաւ-
նէրն աւելի շուտով պէտք է գոր-
ծադրին : Այս կարգէն է ահա Հայ-
կական խնդիրն, որոյ վրայ քանիցս
անգամ խօսած եմք, խնդիր մը որ
երկուսկանին հետ բնաւ ուղղակի յա-
րաբերութիւն չունի :
« Վերջին անգամ այս խնդրոյն վը-
րայ խօսած ժամանակինս զարմանք և
ցաւ յայտնեցինք թէ Ռւսիայէն զըր-
կուած եպիսկոպոսին բանտարկեալ
պահուիլը Ներսէս Պատրիարքն հը-
րաժարելու հարկադրեց :
« Դիտողութիւն ըրինք այն ժա-
մանակ թէ Ռւսիոյ ապստամբութիւն
կողմածը՝ Ժողովրդեան կարողութե-
նէն անհամեմատ ծանր տուրքերու
երեսէ ծագած դժգոհութեան մ'ար-
տայայտութիւնն էր, և այնպէս ինք
թէ իրաւայի պատճառ ունեցող բո-
ղոքները գոհացնել հարկ էր :
« Մեր այս դիտողութեանց հըրա-
տարակութեան յետոյ ոստիկանու-
թեան դուռը բանտարկեալ եպիսկո-
պոսն Հայոց Պատրիարքարանին յանձ-
նուեցաւ. բայց միւս կողմանէ Սիւր-
այլ և այլ կողմերն Հայոց կրած հա-
րըստահարութեանց նկատմամբ նոյն
Պատրիարքարանին առ Բ. Դուռն
ուղղած բազմաթիւ խնդիրներն ան-
ընթաց մնայով, Ներսէս սրբազան իւր
հրաժարականին վրայ պնդելու պար-
տաւորեցաւ :
« Արդ՝ այս խնդրոյն վրայ մեր խօ-
սելէն և բանտարկեալ եպիսկոպոսին
արձակութիւնն յետոյ նոր կնճխներ
ծագեցան Սիւր-այլ մէջ : Ռւսիոյ բնա-
կիւր 'ի դուր պահանջեցին Հայկալի և
Մարաշի մէջ բանտարկեալ բազմա-
թիւ Ռւսիացոց աղատութիւնն, որոց
համար ամբաստանութիւն կամ կառ-

կած միայն կայ թէ կարծեցեալ ա-
պստամբութեան մասնակից եղած
են : Հայկալի կուտակալը, կըսեն, այս
գործը մեծցնել ուղեւոր, որպէս զի
կարծեցնէ թէ Հայկական ապստամ-
բութիւն մը զարկել է, միշտ դժկա-
մակեցաւ բանտէն արձակել այն դըժ-
բաղքներն որք բանտին մէջ իրապէս
կը փոխէ :
« Ասոր վրայ Ռւսիոյ բնակիչք ալ
իրեւ պատանդ վար դրին իրենց զըր-
կուած պատգամաւորութիւն մը կամ
անոր մէկ մասը :
« Իրերն այս վիճակին մէջ են,
երկու կողմն ալ իւր բանտարկեալ-
ները կամ պատանդները կը պահէ :
« Կը տեսնուի ահա որ այս գործն
որ քան զօր աւելի ծանր երկույթ մը
կառնու, և Դրան շահը մեծապէս կը
պահանջէ հնար եղած չափ շուտով
լուծել :
« Հարկ չկայ պնդելու այս կրկին
վիճակին անպատեհ հսկմանց վրայ,
որ Կ. Պոլսոյ մէջ Պատրիարք մը կը
ներկայէ հրաժարական տուած, զոր
կառավարութիւնը կ'աղաչէ ետ առ-
նուլ, և զոր Հայ հասարակութիւնը
չճանչնէ, Սիւր-այլ մէջ ալ միւս կողմէ
ցոյց կուտայ կառավարիչ մը, որ դը-
ժընդակ բանտարկութեան մէջ կը
պահէ այնպիսի մարդիկ, որոց յան-
ցաւորութիւնն հաստատուած չէ,
մինչդեռ անոնց հայրենակիցներն ալ
անփութ պատգամաւորութիւն մը պա-
տանդ կը պահեն :
« Գործն այս կէտին համեմէն ետեւ,
խիստ քիչ բան պէտք կը լինի կուռ մը
ծագելու համար, որ կրնայ շատ ծանր
լինիլ և ընդարձակիլ :
« Կը պնդեմք այն տեղեկութեանց
վրայ, որոց նայելով՝ Հայկալի կուտա-
կալն Հայոց կարծեցեալ չարագործու-
թիւնները կը խոչընդէ՝ որպէս զի ա-
նոնց վերագրած դիտաւորութիւնն
'ի դերեւ համար լինելու արժանիքը
վատակի :
« Այս առաջին անգամը չէ որ Ժո-
ղովրդը ինչպէս նաեւ Բ. Դուռն՝ այս
տեսակ մեղեցանքութեանց զոհ կը լի-
նին, բայց պէտք է դիտել թէ այդ-
մեք նայութեանց հետեանքները կըր-
նան խիստ փութաբար լինիլ թէ՛ կա-
ռավարութեան և թէ՛ երկրին :
« Բ. Դուռն որոշեց նոր յանձնա-
խմբեր զրկել Հայաստանի բարենո-
րոգմանց համար : Բայց մեք ոչ մի-
այն կրնամք հարցնել թէ Եւրոպ. ֆի-
նանսն որքնակի համար՝ այնպիսի
փափուկ պաշտօնի մը համար պէտք
եղած հանգամանքներն ունի՞, այլ և
պէտք է դիտել թէ նախ կրնար օգ-
տակար՝ եթէ ոչ անհրաժեշտ՝ լինել
Հայ հասարակութեան երեսփոխանաց
կամ գլխոյ հետ որոշել այն հիմուն-
քն, որոց վրայ սոյն բարենորոգում
ները պէտք է հաստատին ըստ ՅԱՐԳ-
յօդուածոց Պէրլինի դաշնագրութեան :

Պատերազմից առաջ Բայազդխում 350 տուն տաճիկ կար և 260 տուն Հայ : Ռուսաց զորաց հեռանալից յետ Բայազդխայի Տաճիկները կամե-լան վերադառնալ իրանց տները , ապց Հայերը չէին համաձայնում : Քաջան աղ- թոյսաւ թիւնը թողել էր Հայերի կամքին : Վերջապէս Հա-յերը գիշնում են Տաճիկների խնդ-րանաց , բայցի երեսուն տնից , որոնք տամնէն աւելի փնտաղներն են եղած Հայերին և որոնց պարագլուխ Շէ-րֆի էֆէնդին է եղած : Պատերազ-մից մինչև ցայժմ Բայազդխից պա-տածած Հայերի թիւը մինչև 500 հա-տ է Իւսմաթան պատճառներից :

« Սուրբ Յովհաննէս վանքի վա-
նահայր Յովհաննէս վարդապետը այ-
ժմ թմբուրադ գալէ է և ստացել է իւ-
մայիլ փաշայից մի ոսկեայ ժամացոյց
ընծայ . տէրութեան կողմիցն էլ այս
օրերուն ստանալու է շքանշան :

« Ոչ պակաս համակրութիւն գտած
են փաշաներից , Մօլլա-Սիւլէյմանցի
կաթիլիկ հայերը և թմբուրադ գալէի
հայերից շատերը . որոնք նոյնպէս
ստանալու են շքանշաններ : Բայազի-
տի և Սլաշկերտի հայերի ձայնը այ-
ժմ լսելի է լինում փաշաներին : Ա-
լաշկերտի գաղթականները լսելով
այս ապահով վիճակն իրանց հայրե-
նայից , վերադառնում են իրանց
հայրենիք , շատերը չնայելով մինչև
անգամ եղանակի անդամարութեան-
իսկ մնացողները մտադիր են առաջի-
կայ գարնան վերադառնալու :

« Բայազիտի եկեղեցիները քանդ-
ուած են և չունին մինչև անգամ ե-
կեղեցական դարձեր և անթիւնը .
իսկ դպրոցի մասին և ոչ անգամ յի-
շել հարկ կայ : Միթէ չէ՞ն կարող
թիֆլիզի հարուստ եկեղեցիք իրանց
աւելորդ զարդերից և անթիւններից
մնաց շանել այն կողմերի աղքատ և
յաւիշտակուած եկեղեցիներին Կար-
ծում եմ , որ թիֆլիզի ժողովուրդը
չի քաշուել այդպիսի բարեպաշտու-
թենից : »

... Տէր խմբագիր .

Երեք ամսէ 'ի վեր Պարտիզակ և
գարդ իսկ աստ հիւանդ լինելու՝ չկա-
րացի ուստասխանել Կարնոյ այն նամա-
կագրին , որ կարծելով թէ Լրագիր օ-
րթերթի խմբագիր անօրէնին դիտողու-
թիւններն ուղղակի իմին Պարտիզակ-
րանի մատուցած տեղեկագրէս առնուած
են , Մարտի 2207 թիւ թերթին մէջ դիւ
կը պարտաւ , առարկելով թէ՛ ես դիւ
Հայաստանցւոց գաղթականութեան ա-
ռաւճիկն առնող զլիսաւորներէն եմ քարո-
զած , թէ՛ դայ իրեն պէս Դմադուրը
պատրաստ են հերքելու , ուստի և Կար-
նոյ առաջնորդ Գեր. Յարութիւն Արքե-
պիսկոպոսի պատիւը լսի փրկելու դիտ-
մամբ դրելէ յետոյ՝ կը յաւելու . « Աւելի
ողկէ կը լինի որ Նորին արքանապա-
սաւութիւնն այն ժամանակ աւելի ևս
չկարողեւ համար՝ արդարութեամբ և
անաշուտութեամբ սրբազրութիւն մը ընէ
իր գրուածոց մէջ : »

Նամակագիրն (շ. Պ.) որ Կարնոյ աղ-
նուական և հարուստ դերդաստաններէն
է և թէ ունեւ գրող և խօսող , կարող-
րելով անշուշտ լսած և տխրատես իսկ
եղած է թէ Հայոց աղքատ երբ ամեն տեղ
իր աղքատի փրկութեամբ համար ամեն
կերպով կը գործէր , և Տ. Ներսէս Ս.
Պարտիզակ ևս 'ի Հայաստան այցելու
վարդապետներ կը յղէր , ապիկէն ան-
դիւն հազիւ հայթայթելով նոցա ծախսը ,
որոց մէջէն ես պատերազմի վայր եղած
գաւառները ընդ լեւ և ընդ ձոր կեանքս
վրայ տալու պարտականութեամբ չընկէ-
յետոյ 'ի Կարնի կը հասնիմ , և յաջորդ
կրտսեան Կարնոյ Գեր. Արքեպիսկոպոսը
պատրաստի ատեն Պարտիզակային կոն-
գակին ընթերցման թոյլ չտար , և ո՛չ
կամ իւր կողմէն կամ գէթ իմ կողմէս
սա ժողովուրդն քարոզութեան հաւանիլ
կը հաճի , այն կոնգակը՝ որ ոչ միայն
Օսմանեան վարչակրու , միւթէսարքինե-
րու , գայմաշաւներու և միւսերնեւ ,
այլ և Ռուսական բարձրաստիճանի մէջնէ-
քաշներու և օֆիսիէրներու առջև , թէ
Օսմանեան և թէ Ռուսական Հայաստանի
մէջ ամեն տեղ , մանաւանդ յատուկ քա-
րոզներով եկեղեցիներու մէջ կը կարգա-
ցուի , իսկ Կարնոյ Հայոց եկեղեցւոյն
մէջ ո՛չ . . . բայց ինչո՞ւ , որովհետեւ
Կարնոյ Գեր. Արքեպիսկոպոսն այն ատեն
իրեն համար առանձին նպատակ մը՝ կամ
ուելի ճիշդը՝ քաղաքականութիւն մը ու-
նեցած էր , և այս յայտնի է իր այն գը-
րէն՝ որ ուղղած էր Վեհ. Հայրապետին
Արք.՝ ու՛ր ուրեմն կարմրելու է , ես թէ
նա , որ իւր պարտիզակին գէտ հետած-
է , աղքատ հրահանգներն արհամարհած

է , Պարտիզակային պատգամներն ան-
պատուած է , աղքատին այն ժամանակ-
ւան քաղաքական ընթացքին վերայ ծի-
ծաղած է . . . Բայց երբ յանակոյտ
դէպքերն կը յեղաշրջին քիչ ատենէն ,
այն ատեն Ն. Պարտիզակինը նկատելով
որ իւր տեսակէտն ապարդիւն կը ներ-
կայանայ իւր առջև , կ'իմաստէ , և հե-
տեւելով աղքատին քաղաքականութեան՝ կը
գործէ , թէ և անգամ , որոյ մասին ամեն
տեղ գովեստիւ խօսած եմ , մինչև իսկ
տեղեկագրին մէջ :

Ալխարհ ինչ կը գրուցէ՞ թող գրուցէ ,
Հայաստանցւոց ոչ-գաղթականութեան
պատճառն ոչ Կարնոյ Արքեպիսկոպոսին ,
ոչ ուրիշ Հայ մեծերու կամ նոյն իսկ մեր
Հայաստանցւոց հայրենասիրութեան , և
ոչ՝ ինչպէս այդ նամակագիրն՝ առաջին
անգամ կը գրէ , խմբագիր Հազգը փաշայի
ձեռք առած միջոցներուն շնորհիւն էր ,
այլ միայն և միայն Ռուսիոյ արդի քաղա-
քականութեան , որում հոգեւոր և մարմնով
գործակցեցան Վեհ. Լազարէի զօրա-
պետ և ուրիշ Հայազգի պաշտօնատար-
այս ըսածին հաստատուն վրայ է Ալա-
կերտի քանի մը գիւղերու գաղթակա-
նութիւնն , որոյ ուշ հասաւ Լազարէի
յայտարարութիւնը :

Նամակագիրն Ալաշկերտի Յովհաննէս
վարդապետն ևս պաշտպանելով՝ նորա
արժանաւորութեան իւր փաստ մէջ կը
բերէ խմբագիր Հազգը փաշայի ոսկի ժա-
մացոյց մը մօտեւ նա ընծայ տալը :

Բայց թող բարեհաճի լսել , որ այն
կողմերը գնալու նոյն վարդապետին ա-
յլկարութեանը համար էր : Ես Կար-
նէն հոն երթալու աւելի դիւրութիւն ու-
նէի՝ քան թէ թիֆլիզէն ինչպէս ինչ նա-
մակագիրն , նոյնպէս ես 'ի սկզբան հա-
ւաքով ունէի նորա գործունէութեան վե-
րայ . ուստի շատ մեծ հարկ մը չէի տե-
ներ հոն փութալու : Մանաւանդ որ կոն-
գակս Փոնիքէն առաջ գրուած ըլլալուն՝
Պայագիր և Ալաշկերտ նշանակուած չէր :
Թիֆլիսու աղքատիքը դիւ թախանձեցին
որ Վեհ. Հայրապետէն թուով առնով՝
հոն հասնին : Դիւրեւ այն ատեն երբ Ռու-
կիրը կրտսի և մուկի մէջ էր , երբ Ռուս
բանակը կը մեկնէր , և Յովհաննէս վար-
դապետ սարսափահար 'ի թմբուրադ գալէ
ապաստանած էր թողով վանքը , և վան-
քին մօտակայ գիւղեր չուելու եղած էին
անտիրական ըլլալուն , ես հոն հասայ ,
ուր վարդապետներն ու երկրին գիւղա-
պետներն ըստ օր յառա՛ջ հրաւիրաբոյ
կապակէն ինձ և Այս մասին թիֆլիսու
լրագրերն ու Մասիս արդէն գրած և հը-
րատարակած ըլլալուն՝ այժմ կրկնաբա-
նելն աւելորդ է :

Բայց աւա՛ղ , Կարնոյ նամակագիրը
կը կասկածի եւեր մինչև անգամ հոն եր-
թալու վրայ , և պիտի ստուգէ եղբ ,
զոր երեք ամսէ 'ի վեր չէ կարացած
ցարդ ստուգել , բայց յաւիթ և 'ի նա-
խադիմ այն գաղթական ժողովրդեան ,
որք նեղութեան մէջ կեած ատենին մի-
այն իրենց տէրն ու բարեբարը կը ձա-
նաչեն , ա՛հ կը յայտնեմ , որ ես Պար-
տիզակցի Վահան վարդապետս Մասիսի
կողմէն դար մեր վերամկա չալակած , մա-
խաղս (չանթա) և կ'աղիւնդեմ մէջէս
կախած ժամերով դաւեցի . . . *
գաղթով ժողովրդեան ձիւտուր յետնորդ-
ները տեսնու զայս , բայց որովհետեւ մի-
տամուկար ցնորքէն ին թէ Ռուսը գիւղեք
հաղով ու փողով պիտի օժտէ , անտես
արարին դիւ . ես յետոյ Ռուս բանակա-
վայրին մօտ ձի վարձելով՝ հապիւ գիւղ-
բայն յիկտի ժամանակով աղքատէր քա-
հանայէ մը միսիմարեցայ : Յաջորդ օրն
այդ անձեր Գումարով գորապետին ներ-
կայանայէ յետոյ՝ լսելով առ իս դիմեցին
« Կորուսեցէք , ըսի , որովք չարին , գը-
թացիք դուք , երբ ձեր վարդապետն ու
բարեբարը քրտինք թափելով ուռեցած
ոտներով ձեր մօտէն կը քալէր , և ձեռնէ
բանիկն գոնէ վարձով ձի ուղեց » : Թէ-
յետոյ լուրեայն այդ գաղթականաց դէթ
առժամանակեայ հանգստեան համար միջ-
նորդեցի առ օրս տնի էր :

Ահա հայրենեաց այսպիսի ծառայու-
թիւն մ'ըրած ատենա՝ ոչ հայրապետա-

* Քիւրտ ձիւտուան չուղեց Ռուսական
սահմանը անցնել :

կան խաչ , ոչ արքունական նշան , ոչ ու-
կի ժամացոյց և այլն ընդունեցի ուստեք :
Բայց կը հաւատամ թէ մարդուն չաւա-
ծը Նախախնամութիւնը կը տեսնէ :

Տեղեկագիրս չեմ հրատարակած , վա-
րն զի հոս գալէս 'ի վեր հիւանդ եմ ,
մանաւանդ թէ կան այնպիսի պարագա-
ներ , զորս պաշտօնական շրջանակէն դուրս
հանելը խոհեմութիւն չէ առ այժմ : Ես
ըսելիքս և գրելիքս ըսած ու գրած և յանձ-
նած եմ աղքատի ներկայացուցիչ Տիրոջ :
Ապագային պիտի յայտնուին նոքա , որք
այս ժամանակիս մէջ արդարեւ մեծ հան-
դիսացան յանուն աղքատի և հայրենեաց :
1879 թիւոր . 15 Վահան Լազարէի
ի Կ. Պոլիս

Զմիւռին 10 թիւոր . 1879 .

... Խմբագիր .

Պատուական Մասիսի 2258 թուով
յօդուած մը հրատարակած էինք Զմիւռ-
նիոյ աղքատի գործոց նկատմամբ , նկա-
րագրելով Վարչական ժողովոց և խոր-
հրդոց գործունէութիւնն և յայտնելով
քանի մը պարտաւորէտներու ֆոթէ ցաւն :

Արշալոյս իւր 1111 թուով նամակ մը
կը հրատարակէ , որուն հեղինակն , ինչ-
պէս նաև նոյն ինքն Արշալուոյ խմբա-
գիրն , մեր յօդուածը Մեծ. Մամուրեան-
նի ֆրէ՛ն ֆրէ՛ն ֆրէ՛ն կը հայհոյեն յիշեալ
բաղմարդին գրաւէտն :

Դուք գիտէք . . . խմբագիր , որ մեր
յօդուածին հեղինակն մեք երեւոյ Մա-
մուրեան , գիտէ նմանապէս ամեն ընթեր-
ցող , որ Մամուրեան ունի արդէն յա-
տուկ օրագիր և աղաարքն կը հրատա-
րակէ ինչ որ պէտք է . ունի նաև յա-
տուկ ո՞՞՞ կամ գրիչ որ կը տարբերի մեր
գրէն : Սակայն Արշալոյս և իւր թղթա-
կիցն երեկ թէ այնչափ հարուած կերած
են Մամուրեանէն զրական ասպարիզի
վրայ , որ ո՛չ թէ միայն այլոց գրուածքն
անոր ֆրէ՛ն ֆրէ՛ն ֆրէ՛ն , այլ թերեւ երա-
դի մէջ անգամ Մամուրեանի գրիչն կը
տեսնեն : Միթէ այսպէս չէին երազեր
նաև Պ. Յ. Միքայէլեանի նամակներուն
համար , որոնք երբեմն կը հրատարակ-
ւէին պատուական Մասիսի մէջ , Մենք
չէ՛ք զարմանար անոց երազներուն և
խաղ մարդարեւութեանց վերայ , այլ մի-
այն կը ցաւինք և շատ կը ցաւինք , որ
մեր գրութեան պատճառաւ 'ի դուր կը
հայհոյուի Մեծ. Մամուրեան :

Ինչո՞ւ ասոր անոր գրիչն առիթ բու-
նելով ուղիղ պատասխան տալէ կը խու-
սափեն Արշալուոյ խմբագիրն և իւր հայ-
հոյի թղթակիցն : Ինչո՞ւ մեր գրած ի-
րողութեանց չեն պատասխաներ , եթէ
երեքը պատասխան ունին : Մենք ըսած
էինք թէ՛ քանի որ Զմիւռնիոյ գաւառա-
կան վարչութիւնն իւր նախադասով և
բոլոր ճիւղերով կը գործէ և Սաւալան-
եանն ու Վանանդեցիի կոյր ձեւանալով
սոյն գործունէութեան դէմ կը գրեն ,
անշուշտ ֆոթէ ցաւ ունին , և նոյն ցաւն
բացարարած էինք : Արշալուոյ նամակը
բնաւ երեքը չըմարտասիր այս ցաւն , այլ
աւելի կը հաստատուէ . վասն զի փոխանակ
մեր գրած իրողութեանց պատասխա-
նելու՝ Մամուրեանին վերայ կը յարձակի ,
քորին տակէն դպրոցի քանի մը ուսու-
ցիչներն կը պիտարակէ , շարաշար (որոնք
գրողական վարչութիւնէն որդուած են
և ոչ երեքը Առաջնորդէն , ինչպէս կըսէ
ստախոս նամակագիրն) և Վանանդեցիին
կը գովէ և այնչափ կը գովէ որ մարդու
ծիծաղը կը շարժէ : Ասոնք փոքի ցաւի
մեծ նշաններ են և ոչ թէ մեր գրածնե-
րուն պատասխան : Ուստի մենք Արշալու-
ոյ նամակն իր բոլոր բովանդակութեամբ ,
իւր հայհոյանքներով , ստութիւններով և
ծաղրական գովեստներով , գրողին և հա-
ւանդներուն կը թողունք , իրեն իրենց
միայն սեպհական ծառանդութիւն , և կը-
սենք բացարձակ թէ՛ Արշալուոյ թղթա-
կիցն մեզ պատասխանած չէ , այլ զինքն
անպատուած է :

Կիրասուն 10 թիւոր . 1879 .

... Խմբագիր Մասիս պատուա-
կան լրագրոյ .

Ձեր պատուական Մասիսի 2238
և 41 թիւ թերթերը կարդացողը

չեմ յուսար որ անդգոյ և անտար-
բեր կեցած ըլլայ .

Այն է Մեծ. եղբարց Սպարթա-
լեանց մեծագործութեան հուշակն
ու համբաւը եկան հիւնեցին մեր ա-
կանջներուն , և մեր զգացմանց թե-
լերը գրգռեցին . ուստի ամենայն
սիրալիր խնդու թեամբ կը փութամ
հետեւալ ուղերձը առ Մեծ. Եղբարք
Սպարթալեան նուիրել , և խնդրեմ ,
. . . տէր , հաճեցէք զայն պատուական
Մասիսի գաղթական վերայ գեանդել
և իմ շնորհատարութեան ու երախ-
տագիտութեան հաւատարմքն յայտ-
նել 'ի նշան այն մեծ սիրոյն՝ զոր միշտ
կը տածենք մեր սրտերուն մէջ իրենց
համար :

Ազնիւ Եղբարք Սպարթալեան
Առաքինիք Յակովբ Յօհան
Համանուն որդւոց Որոտման
Յիշեալիք 'ի դարս այնց նման .

Մեծանուն Եղբարք , առաքինու-
թիւնը նիւթ մը չէ : Ինչպէս և ոչ
ամեն բարեգործութիւն մեծախար-
թամ հարուստներու յատկացեալ
գործ մը , այլ մարդոց բարոյական
զգացումէն ծնած և ծնելիք արդիւնք :

Աղքատին Հիւանդանոցի բարկը-
պատակ հաստատութեան մէջ ձեր
ցոյց տուած առատաձեռնութիւնն
ու հայրենասիրութիւնը՝ ձեր նիւ-
թական վիճակին ճոխութենէն յա-
ռաւ եկած ըլլալը չպիտի գովեմ :
այլ ձեր բնածիր տաղանդին պտուղը
ճանչնալով , որ Աղքատ անհաստեղտուն
յեւթինն եմ , իմ բաժին շնորհակա-
լութիւնս աստանօր հրապարակ կը
հանեմ . դուք որ Աղքատ պատապա-
րելներուն խոճակ վիճակը ձեր բա-
րոյական խոճին առարկայ ըրէք , ար-
դարեւ մեծ և առաքինասէր սիրտ և
ազնիւ զգացում կը կրէք :

Ուրեմն , կ'աղաչեմ , հաճեցէք
ընդունիլ իմ սրտի խորին շնորհակա-
լիքը զոր կը յայտնեմ առ ձերք Մե-
ծապատուութիւն , մաղթելով մի-
անգամայն որ Աղքատն մէջ գըտ-
նուած Սպարթալեաններուն բոլոր-
րին ալ սոյն աղքատիական եռանդը
տայ 'ի վերականգնումն Աղքատիւն
և 'ի փառս հայրենեաց :

Անձանօթ բարեկամ ձեր
Գ. Խ. Մամուրեան :

Ա. Զ. Դ.

Աղքատին Հիւանդանոցի կանանց
հիւանդապահութեան և յիմարապա-
հութեան համար՝ գոհացուցիչ ամ-
սականաւ ո՛ւ է պաշտօնով գործած-
ւելու համար մի քանի անձինք պէտք
եղած ըլլալով , յանձն առնողներն ա-
ռանձին կը հրաւիրուին յԱղքատին
Հիւանդանոցի գրասենեակ 'ի լիւծ
Նոր խան թիւ 49 միջին յարկ :
1879 թիւոր . 15 Մնամ յարգանք
Գրասեն. Աղք. Հիւ. Ս. Մ. Հիւանդանոց

Ի. Ա. Ն.

Նանք Աղիւ խտրէսի տէկլիւմէն
լէրի հաւըլաթընտան օլարադ . ս. վճուտ
օլուպ շուրութը մեզ արբերէսիլիլէ
փիւրութիւթ օլունաճալը վէ շուպաթը
ըլումինն օն պէշնճի բէնճէշալիհ
կիւնիւ դարալը գալիսի վերիլեճէկի
իլան օլունան պէշ եիւզ պլին դըյէ
քէքէկին պէշէր գըյէսի սլիմըլ փա-
րայա թալիպի էօհտէսինտէ գալըլ
վէ գարարը տալի վերիլիլ օլումըլա
ճիւմաա իրթիկի կիւնիւ ապ շամա գա-
տար ուսուլը վէճէլէ եիւզտէ պէշ
զամըլլա իշթիւտարընա թալիպ օլան
լարըն Տարի Շուրայի ապքէրիլէ կէլ-
մէլիլ :

15 շուպաթ 1879

Պապը Սէրապէրէ

ԿՄԼ, ԿՄԹԱ. Պետրոս աղա Հէրխման: